ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Շրջակա միջավայի Նախարարության «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի 2025 թվականի երկրորդ եռամսյակի աշխատանքների

Հաշվետվություն

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության առանցքում բնության պահպանությունն է: Պարկի տարածքներում իրականացվում են շարունակական քայլեր՝ ուղղված բնական լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև համայնքների հետ համագործակցության խորացմանը՝ կայուն զարգացման նպատակով:

1. Պահպանման գոտու մշտադիտարկման աշխատանքներ

- Շարունակվել են պարկի տեղամասերում մշտադիտարկման աշխատանքները:
- Չեն գրանցվել ապօրինի ծառահատման, հրդեհման կամ որսագողության դեպքեր:
- Առաջարկվում է ավելացնել նոր ցուցատախտակներ և տեղեկատվական վահանակներ

2. Կենսաբազմազանության տվյալների հավաքագրում

- Կատարվել են թռչունների, կաթնասունների և ջրային կենդանիների մշտադիտարկումներ:
- ֆիքսել ենք 11 հատ սովորական հողմավար բազե /Falco tinnunculus/, 57 հատ կռնչան բադ /Anas platyrhynchos/, 24 հատ աղվես /Vulpes vulpes/, կարմիր բադ / Tadoma ferruginea/ -19 հատ , գանգրափետուր հավալուսն/ Pelecanus/ -54 հատ , մեծ ձկնկուլ /Phalacrocorax carbo/ -15 հատ, նապաստակ /Lepus/ 21 հատ , հայկական որոր /Larus armenicus/ -450 հատ, քարարծիվ /Aquila rapax /-4 հատ, մոխրագույն տառեղ / Ardea cinerea/ -28 հատ, Դեղին կոկոռ-/Nuphar lutea/-40 հատ, Գորշ արջ /Ursus arctos/-1 հատ:
- Ուշադրություն է դարձվել վտանգված և ներգաղթող տեսակների շարժին:

3. Կենդանական աշխարհի տեղաշարժի ուսումնասիրություն

- Տեղադրվել են նոր ֆոտոթակարդներ / կիրառվել են եղած սարքերը՝ հավաքելու տվյալներ գիշերային ակտիվության վերաբերյալ:
- Վերլուծվել են գայլերի, աղվեսների, ջրասամույրների և վարազների, արջերի տեղաշարժի տվյալները:
- Նպատակ է դրվել հաջորդ եռամսյակում ընդլայնել դիտարկման գոտիները:

4. Կրթադաստիարակչական աշխատանքներ

- Իրականացվել են բնապահպանական դասընթացներ հետևյալ համայնքների դպրոցներում՝ Ղազանչի, Թավշուտ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք և Վարդաքար:
- Թեմաները ընդգրկել են ազգային պարկի ֆաունան և ֆլորան, էկոզբոսաշրջության հիմնական գաղափարները:
- Կից բաժանվել են տեղեկատվական թռուցիկներ:

5. Զբոսաշրջային մոնիթորինգ

- 2025 թ. 2-րդ եռամսյակում արձանագրվել է [786] այցելու:
- Նշվել է ներգնա և արտագնա այցելուների հարաբերակցությունը:
- Գիշերակացի ծառայությունից օգտվել են [104] զբոսաշրջիկներ:
- Արձանագրվել է բարձր հետաքրքրություն գիդավորված շրջայցերի նկատմամբ:

6. Տեղեկատվական աշխատանքներ և համագործակցություն

- Շարունակվել է ֆեյսբուքյան էջի թարմացումը, հրապարակվել են լուսանկարներ և նորություններ:
- Ապահովվել է պատասխանատվության բարձր մակարդակ՝ նախարարության և տնօրինության առաջ:
- Կատարվել են բոլոր հանձնարարականները ժամանակին և պատշաճ կերպով:

7. Բնապահպանական օրերի նշում և էկոնախաձեռնություններ

- Կենսաբազմազանության միջազգային օր
- Շրջակա միջավայրի համաշխարհային օր
- Ծառատունկի ակցիաներ
- Մաքրման և էկոդաստիարակչական նախաձեռնություններ

2-րդ եռամսյակի ընթացքում «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժինը իրականացրել է կարևոր հետազոտություններ և կազմակերպել է բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստում են ազգային պարկի էկոհամակարգի պահպանմանը և զբոսաշրջության զարգացմանը: Ստեղծվել են նոր համագործակցություններ տեղական համայնքների և գործընկեր կառույցների հետ, ինչը հնարավորություն է տալիս հետագա արդյունավետ զարգացում ապահովել: Վստահ ենք, որ շարունակական աշխատանքը կնպաստի ազգային պարկի բնական և զբոսաշրջային ներուժի հարմարեցմանը ու բարգավաճմանը:

Գիտության և Զբոսաշրջության բաժնի պետ՝ Հ.Ստեփանյան

Զբոս.բնապ.իրազեկման հասար. հետ կապերի՝ Հ.Ոսկանյան

և մոնիտորինգի մասնագետ

Կենսաբան՝ Մ. Մխիթարյան